352
Գ-68

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

ԳԻՐՔ № 29

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ, ՎԱՐՊԵՍ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՀՍԽՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ

ՅԵՐԵՎԱՆ 1928 Թ.

39685
20.03.2013
352
Գ-68
1 MAR 2010
1003
13263

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

ԳԻՐՔ № 29

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ ՎՈՐՊԵՍ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՀՍԽՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ

ՅԵՐԵՎԱՆ 1928 Թ.

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ I ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ № 4664
ԳՐԱՖԵՊՎԱՐ № 1014 բ.
ՏԻՐԱԺ 1200

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

ԲՈԼՈՐ ԳԱՎԱՌԱՅԻՆ ԳՈՐԾԿՈՄՆԵՐԻՆ

ՊԱՏՃԵՆԸ՝ ԳԱՎԱՌԱԿԱՅԻՆ ԳՈՐԾԿՈՄՆԵՐԻՆ

«Ամուսնության, ընտանիքի և խնամակալության» Որենագրքի հիման վրա գյուղական վայրերում գյուղական խորհուրդները հանդիսանում են խնամակալության և հոգաբարձության մարմիններ, որոնց վրա դրվում են բավականին կարևոր պարտականություններ։

Հետագոտությունը տեղերում ցույց է տալիս, որ գյուղական խորհուրդների գործունեությունն այդ առպարեզում ընթանում է բավականին թույլ, որից առաջում են խնամակալության լենթակա անձնավորությունները՝ որբեր, ծխի մեջ մնացած միայն անչափահաս անդամները, տկարամիտները և այլն։

Ստեղծված նման դրության վրա անհրաժեշտ ենք գտնում հրավիրել գավառային և գավառակային գործկոմների ուշադրությունը, առաջադրելով հետևյալ հիմնական միջոցների կիրարկումը՝

1. Առաջարկել գյուղական խորհրդներին մանրամասն ծանոթանալ խնամակալության և հոգաբարձության որենքի հետ։

2. Գավառակային գործկոմի նիստերում պարբերաբար լսել գյուղխորհրդի զեկուցումները խնամակալության և հոգաբարձության աշխատանքների մասին և հայտնաբերված թերությունների վերաբերյալ տալ ցուցումներ։

3. Գյուղական խորհուրդների նիստերում դնել խնամակալների և հոգաբարձուների զեկուցումները իրենց աշխատանքների մասին։

4. Գյուղական խորհուրդների գրասենյակներում ունենալ խնամակալության և հոգաբարձության հատուկ գործեր, ինչպես նաև խնամակալների և հոգաբարձուների ցուցակներ։

5. Մասսայականացնել խնամակալության և հոգաբարձության օրենքը տեղերում՝ այդ առթիվ դնելով զեկուցումներ համայնական, հասարակական կազմակերպությունների ընդհանուր ժողովներում։

Հայկենգործկոմի Քարտուղար՝

[redacted]

Կազմբաժնի Վարիչի Տեղակալ՝

[redacted]

12 սեպտեմբերի 1928 թ.

№ 014—1

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՎԱՐՊԵՍ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Հ.Ս.Խ.Հ. Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1921 թ. նոյեմբերի 16-ի «Խնամակալության և հոգաբարձության մասին» դեկրետի համաձայն, խնամակալության հիմնարկները հանդիսանում էին մեր ժողովրդական դատարանները։ Սակայն կյանքի փորձը ցույց տվեց, որ գյուղից յերբեմն հեռու գտնվող դատարանը հնարավորություն չունի հսկելու և ղեկավարելու խնամակալության գործը։ Այդպիսի դրությունից տուժում էին գյուղի խնամակալության յենթակա անձնավորությունները—անչափահասները, վորբերը, հոգեկան հիվանդները, ակարամիտներն և այլն։

Այս դրությանը վերջ տալու, ինչպես նաև խնամակալության գործը միանգամայն լավ հիմքերի վրա դնելու նպատակով՝ Հ.Ս.Խ.Հ. Կենտրոնական Գործադիր Կոմիտեն 1927 թ. սեպտեմբերի 18-ի վորոշմամբ հաստատեց ու գործադրության դրեց «Ամուսնության, ընտանիքի և խնամակալության» Օրենսգիրքը։ Համաձայն այդ նոր Օրենսգրքի՝ խնամակալության և հոգաբարձության ամբողջ գործը գյուղական վայրե-

բում հանձնվում է գյուղական խորհուրդներին։

Մեր նպատակն է այս գրքույկով պարզաբանել գյուղական խորհուրդների անելիքները խնամակալության և հոգաբարձության ասպարիզում, որպեսզի նրանք, լավ գիտակցելով իրենց պարտականությունները, միջոցներ ձեռք առնեն կարգի գցելու և ճիշտ կերպով ղեկավարելու խնամակալության գործը։

ԻՆՉ ՆՊԱՏԱԿՈՎ Է ՀԻՄՆՎՈՒՄ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ

Խնամակալությունն և հոգաբարձությունը սահմանվում է անգործունակ անձի, նրա իրավունքների և շահերի պաշտպանության, այլև որենքով նախատեսված դեպքերում, նրա գույքի պահպանության համար։ Իսկ ում ենք անվանում անգործունակ. այն բոլորին, որոնք իրենց սեփական գործողություններով չեն կարող իրավունքներ ձեռք բերել, կամ պարտականություններ սահմանել։ Այդպիսիների թվին են պատկանում 14 տարին չլրացրած անչափահասները, սահմանված կարգով՝ ակարամիտ կամ հոգեկան հիվանդ ճանաչվածները, շուայլողները, ալկոհոլի չափահասները, որոնք իրենց ֆիզիքական պակասությունների հետևանքով անկարող են ինքնուրույն կերպով պաշտպանելու իրենց իրավունքները, այն է կույրեր, համրեր, խուլեր և այլն։ Բացի այս բոլորից՝ խնամակալություն նշանակվում է նաև անհայտ բացակայող կամ մահացած անձի գույքի վրա, որպեսզի այդ գույքը չմատնվի կորուստի ու փչացման։ Անհայտ բացակայող կամ մեռած են հայտարարվում հետևյալ դեպքում. յեթե գյուղացիներից որևե մեկը անհայտ բացակայե և հիմք կա յենթադրելու, որ նա կամ մեռել է կամ նրան որևե դժբախտություն է պատահել, ապա նրա հարազատները կամ ազգականներն և կամ նրանք, որոնք նրա գույքով շահագրգռված են կարող են դիմել Ժողդատարանին, որպեսզի այդ անձն անհայտ բացակայող ճանաչվի։ Դատարանը քննում է այդ հարցը և որոշում է կայացնում ճանաչել այդ անձին անհայտ բացակայող, իր որոշման մասին հայտնելով համապատասխան գյուղխորհրդին։

ՈՎ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ ԽՆԱՄԱԿԱԼՆԵՐ ՅԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐ

Ինչպես սկզբում ասվեց գյուղական վայրերում խնամակալության և հոգաբարձության մարմիններ են հանդիսանում գյուղական խորհուրդները։ Այստեղից պարզ է, որ խնամակալներ և հոգաբարձուներ նշանակելու իրավունք ունի միայն գյուղական խորհուրդը։ Որպեսզի գյուղի իշխանությունը խնամակալների կամ հոգաբարձուների թեկնածուներ ընտրելիս սխալմունքների մեջ չընկնի, նրան պետք է ոգնեն հասարակական կազմակերպություն-

ները, որոնց որենքը թույլ է տալիս առաջադրել խնամակալության համար համապատասխան անձնավորություններ և խնդրել գյուղական խորհուրդներին այդպիսիներ նշանակելու։ Յենթադրենք, վաղը Պետրոսը մեռավ, և ծխի մեջ մնացին նրա անչափահաս զավակները՝ կարոտ խնամքի։ Գյուղի Փոխադարձ Ողնության Կոմիտեն, նկատի առնելով, որ Պետրոսը լեղել է Փոխադարձ Ողնության Ընկերության անդամներից մեկը, հրավիրում է նիստ։ Այստեղ քննության են առնում Պետրոսի որբերի խնամակալության հարցը, առաջադրում են որպես խնամակալ, ասենք, Գեվորգին և խնդրում գյուղական խորհուրդին նրան նշանակելու խնամակալ անչափահաս որբերի վրա։ Գյուղական խորհուրդը ուրախությամբ պետք է հարգի Փոխադարձ Ողնության Կոմիտեի միջնորդությունը և Գեվորգին նշանակում է խնամակալ, համոզված լինելով, որ ՓՈԿ-ը ոժանդակություն է ցույց տալու խնամակալին, հսկելու չե նրա գործունեության վրա և, որևե պակասություններ նկատելով, զեկուցելու է գյուղական խորհրդին։

ԻՆՉ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԿԱ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Խնամակալություն նշանակվում է տասն և չորս տարին չլրացած անչափահասների,

տկարամիտների, հոգեկան հիվանդների, շռայլողների վրա, ինչպես նաև անհայտ բացակայող կամ մահացած անձանց գույքի վրա։ Խնամակալներն իրենց խնամարկյալների անունից իրականացնում են նրանց իրավունքներն ու կատարում նրանց պարտականությունները։ Յեթե Պետրոսը նշանակված է որբ Գեվորգի խնամակալ, ապա նա, նկատի առնելով Գեվորգի շահը, թույլ չի տա որ որևե մեկը, հակառակ որենքի, խլի, փչացնի, վնասի Գեվորգի գույքը։ Անհրաժեշտության դեպքում Պետրոսը դիմում է դատարան և խնդրում նրա վոտնահարված իրավունքների պաշտպանությունն և այլն, կամ կարող է պատահել, որ գյուղական հասարակական ժողովի վորոշմամբ գպրոցի կառուցման համար Գեվորգի վրա դնում են յերկու ռուբլի ինքնահարկում, այս դեպքում Պետրոսը պարտավոր է հոգալ այդ գումարի վճարման մասին խնամարկյալի գույքի յեկամուտներից։

Հոգեբարձությունը նշանակվում է տասն և չորս տարեկանից մինչև տասն և ութ տարեկան անչափահասների, այլ և այնպիսի չափահասների վրա, որոնք չեն կարող ինքնուրույն կերպով պաշտպանել իրենց իրավունքները (կույրերի, համրերի և այլն)։ Հոգաբարձությունն ողնում է նման անձանց՝ իրենց իրավունքները կենսագործելու և իրենց պարտականությունները կատարելու, ինչպես նաև պաշտպանում է

նրանց՝ յերրորդ անձանց կողմից կատարվող վտանգաբերություններից։ Յենթադրենք, Քաջարանցի Սահակը կույր է և նա ցանկանում է իր հողերը կապալով տալ մեկին, կնքելով վերջինիս հետ պայմանագիր։ Յեթե Պետրոսը կույրի վրա հոգաբարձու չե նշանակված, ապա նա պետք է ոգնություն ցույց տա Սահակին այդ գործում, հետևի, հսկի, որ կապալառուն չխափի նրան, պայմանագրին սարկացուցիչ բնույթ չտա։

Թե ի՞նչ իրավունքներ ու պարտականություններ ունեն խնամակալությունն ու հոգաբարձությունը, ով ի՞նչ սահմաններում կարող է գործել, այդ առթիվ մանրամասն խոսվում է «Ամուսնության, ընտանիքի և խնամակալության» Որենսգրքի 2-րդ գլխում, որի հետ յուրաքանչյուր խնամակալ ու հոգաբարձու պարտավոր է լավ ծանոթանալ։

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՈՒՄ ՊԵՏՔ Է ՆՇԱՆԱԿԻ ԽՆԱՄԱԿԱԼ ՈՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒ

Խնամակալին կամ հոգաբարձուին որենքը բավականին լայն իրավունքներ է տվել։ Նրանց վրա խոշոր պարտականություններ են դրված։ Ուստի խնամակալ կամ հոգաբարձու նշանակվելիս՝ գյուղական խորհուրդը հազար անգամ պետք է քննի, դատի և ապա վորոշում կայացնի։

Յեթե գյուղական խորհուրդը խնամակալ է

նշանակում Գեվորգին, նա պետք է հաշվի առնի, թե ինչպի՞սի մարդ է Գեվորգը, արդյո՞ք սա ընդունակ կլինի կատարելու խնամակալի գույքը թե՞, փոխանակ պահպանելու այդ գույքը, վաղը կը ծախի, կուտի և ապա մի կողմը կըքաշվի։ Գյուղական խորհուրդը խնամակալ և հոգաբարձու նշանակելիս, պետք է ուշադարության առնի նաև այն հարաբերությունները, վորոնք գոյություն ունեն ավյալ անձի և խնամակալության կամ հոգաբարձության յենթակա անձի միջև։ Յեթե Գեվորգը թշնամություն ունի Պետրոսի ծխի հետ և տարիներ շարունակ կռիվ և մղել, վոր կալի կողքին գտնվող գոմը գցի իր ձեռքը, վաղը նա, խնամակալ դառնալով, գայլի դերը կըխաղա Պետրոսի գլխին։ Այս հանգամանքների վրա գյուղական խորհուրդները լուրջ ուշադրություն պետք է դարձնեն և վոչ մի դեպքում թույլ չտան, վոր խնամակալի շահերը մի մազաչափ վտանգի յենթարկվեն։ Խնամակալներ և հոգաբարձուներ առաջին հերթին նշանակվում են խնամակալյալին մոտիկ անձերից — քեռին, հորեղբայրը, խնամին, քավորը և այլն, իսկ այդպիսիները չլինելու դեպքում ուրիշ վստահելի անձերից։ Ծնողներն ու վորդեգրողները խնամակալ կամ հոգաբարձու չեն համարվում առանց հատուկ նշանակման։ Խնամակալ կամ հոգաբարձու մեկի վրա կարող է նշանակվել մեկ կամ մի քանի անձնավորություններ։

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԻՆՉՊԻՍԻ ՄԱՐԴԿԱՆՑ ՉՊԵՏՔ Է ՆՇԱՆԱԿԻ ԽՆԱՄԱԿԱԼ ԿԱՄ ՀՈԳԱԲԱՐՁՈՒ

Գյուղական խորհուրդը լավ պետք է իմանա, վոր խնամակալ կամ հոգաբարձու չեն կարող լինել կրոնական պաշտամունքների հոգևոր սպասավորները – քահանան, մոլլան, ռաբբին, վարդապետը, նախկին վոստիկանության ու պահնորդական բաժանմունքների գործակալներն ու պաշտոնյաները, ժանդարմերիայի և պատժիչ մարմինների գործունեությունը ղեկավարող անձինք, դաշնակցական խմբապետները, շահախնդրության նպատակով գործած հանցանքների համար դատապարտվածները, ինչպես օրինակ՝ մարդասպանը, գողությունն արհեստ դարձրած անձերը, դատական կարգով ծնողական իրավունքից զրկվածները, հոգեկան հիվանդները, անչափահասներն և վերջապես այն անձերը, վորոնց շահերը հակառակ են խնամակալության ու հոգաբարձության յենթակա անձանց շահերին, ինչպես նաև նրանք, ովքեր թշնամական հարաբերություններ ունեն խնամարկյալի հետ։ Գյուղական խորհուրդը նման անձնավորություններից խնամակալներ և հոգաբարձուներ նշանակելիս, կը յենթարկվի օրինական պատասխանատվության։

ԽՆԱՄԱԿԱԼԻ ԿԱՄ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼ ՉԻ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ

Գյուղական խորհուրդը յեթե Գեվորգին

նշանակում է Սուրենի խնամակալ, Գեվորգը իրավունք չունի ասել թե չեմ կարող, գործերս շատ են, ժամանակ չունեմ և այլ անհիմն պատճառաբանություններով հրաժարվել խնամակալի պարտականություններից։ Ամեն մի գյուղացի կամ գեղջկուհի պետք է լավ իմանա, վոր որենքը թույլ չի տալիս նրան հրաժարվելու խնամակալությունից կամ հոգաբարձությունից, բացառությամբ հետևյալ դեպքերի։ Խնամակալ կամ հոգաբարձու նշանակվելուց իրավունք ունեն հրաժարվելու նրանք, վորոնց 60 տարին լրացել է, նրանք, ովքեր հիվանդ են՝ ունեն վորևե ֆիզիկական պակասություն, նյութական ծանր վիճակի են, կամ այնպիսի զբաղմունք ու պաշտոն ունեն, վոր անկարող են կատարել այդ պարտականությունը, նմանապես իրավունք ունեն հրաժարվելու այն անձերը, վորոնք իրենց ընտանիքում յերկու կամ ավելի զավակ են դաստիարակում, այն մայրերը, վորոնք ծծկեր կամ մինչև 8 տարեկան հասակի զավակ ունեն, վերջապես այն անձինք, վորոնք արդեն իսկ խնամակալ կամ հոգաբարձու յեն կարգված։

Այս բոլոր մանրամասնությունները մեջ բերինք նրա համար, վոր գյուղական խորհուրդը նկատի ունենա այս բացառությունները և յեթե Սամսոնը 60 տարեկան է կամ Մկրտիչը խիստ չքավոր ու հոգով իր գլուխն է պահում հանկարծ չվերցնի նրանց ու խնամակալ նշանակի, վորով-

հետև այդպիսիները վոչ մի օգնություն չեն կարող հասցնել խնամարկյալին, և խնամակալությունը կըդառնա ձևական. անունը կլինի, ամանումը վոչ:

ԽՆԱՄԱԿԱԼՆԵՐԸ ՅԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐՆ ԻՐԵՆՑ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՒՄ ԵՆ ՁՐԻԱԲԱՐ

Վոչ խնամակալը և վոչ հոգաբարձուն իրավունք չունեն գյուղական խորհուրդից կամ խնամարկյալի յեկամուտներից պահանջել վարձատրություն: Նրանք իրենց պարտականությունները կատարում են ձրիաբար: Սակայն այն դեպքերում, յերբ գյուղական խորհրդի, վորպես հոգաբարձության և խնամակալության մարմնի, տնօրինության տակ կան յեկամտաբեր գույքեր, ապա նա կարող է թույլատրել խնամակալին վորոշ վարձատրություն ստանալու, բայց գույքից ստացվող յեկամտի 10 տոկոսից վոչ ավելի: Բերենք մի օրինակ. վորբ Պետրոսին հորից մնացել է մի ջրաղաց, վոր բերում է տարեկան 200 ռուբլի. այդ յեկամտից գյուղական խորհրդի թույլատվությամբ խնամակալին կամ հոգաբարձուին կարելի յե տալ վարձատրություն տարեկան 20 ռուբլուց վոչ ավել: Գյուղական խորհուրդը խնամակալին կամ հոգաբարձուին նշանակում է վարձատրություն միայն այն ժամանակ, յերբ այդ խիստ անհրաժեշտ է խնամարկյալի շահերի պաշտպանության համար: Նման

վարձատրություններ թույլատրելիս գյուղական խորհուրդը շռայլ չպիտի լինի, գիտակցելով, վոր այդ գումարները վճարվում են վորբերի, անչափահասների, հոգեկան հիվանդների, տկարամիտների կոպեկներից:

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՊԵՏՔ Ե ՀՍԿԻ, ՎՈՐ ԽՆԱՄԱԿԱԼՆԵՐԸ ՅԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԸ ՀՈԳ ՏԱՆԵՆ ԽՆԱՄԱՐԿՅԱԼՆԵՐԻ ՎՐԱ

Խնամակալը վոչ միայն պետք է հսկի, պաշտպանի խնամարկյալի գույքը, տները, գոմերը, անասունները, այլ նաև պետք է հոգ տանի, վոր անչափահաս խնամարկյալն ընդունվի դպրոց, կրթվի, դաստիարակվի, հասարակության համար պիտանի մարդ դառնա: Յեթե խնամարկյալը հոգեկան հիվանդ է, կամ տկարամիտ, խնամակալը պետք է հոգ տանի նրան բժշկելու, հսկողություն ունենա, վոր գյուղում հիվանդ խնամարկյալին չվիրավորեն, ծաղրի չյենթարկեն, վորպիսի տգեղ յերևույթը շատ տարածված է մեր հետամնաց գյուղերում: Յեթե խնամակալն անպարտաճանաչ է, ու այս բոլորն ականջի հետևից է գցում, գյուղական խորհուրդը պարտավոր է կանչել խնամակալին, խորհուրդներ և ցուցմունքներ տալ, ասել, թե ինչ աղբյուրներից կարելի յե անհրաժեշտ և օգտակար ծախքերը հոգալ և այլն: Այն գյուղական խորհուրդը, վոր այդ բոլորը չի անում, նա վոչ միայն վնասում է, ասենք, Պետրոսին, Գեվորգին, այլ

նաև փնտրում է ամբողջ հասարակության, որովհետև նրանք, մութ մնալով, վարը հասարակության համար անպիտան մարդիկ են լինելու։ Գյուղական խորհուրդները միաժամանակ պետք է միջոցներ ձեռք առնեն գյուղական փոխադարձ ոգնության կոմիտեների և հոգեհասարակությունների միջոցով վարել ապալ վորբերի հողերը և նեցուկ հանդիսանալ նրանց անտեսությանը։

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԽՆԱՄԱՐԿՅԱԼԻ ՎՐԱ ԿԱՏԱՐՎՈՂ ԾԱԽՔԵՐԻ ՎՐԱ

Խնամարկյալին պահելու, կերակրելու, հագցնելու, կրթելու և այլն կարևոր կարիքների համար պահանջվում են ծախքեր։ Այդ ծախքերը խնամակալները կամ հոգաբարձուները հոգում են խնամարկյալի գույքի ցեկամուտներից, իսկ եթե այդ ցեկամուտները փոքր են կամ բոլորովին բացակայում են, նման դեպքերում ծախքերը կատարվում են խնամարկյալի բուն ստացվածքից, վոր կարող է ծախվել, գրավ դրվել միայն գյուղական խորհրդի թույլտվությամբ։ Ցենթադրենք խնամարկյալ Պետրոսն ունի մի կիսաքանդ գոմ, վոր տարին բերում է մի քանի ռուբլի ցեկամուտ։ Եթե այլ աղբյուրներ չկան, պարզ է, վոր այդ ինչին փողով խնամարկյալը չի կարող ապրել։ Նման ծայրահեղ դեպքերում գյուղական խորհուրդը կարող է թույլատրել ծախելու գոմը և ստացված գումարները գործադրելու վորբի կարիքների վրա։

1003
13963

Միաժամանակ որենքը պարզաբանում է, վոր շուտ փչացող կամ իր բնույթով վաճառման ցենթակա կամ գործածության համար արդեն անպետք դարձած գույքը, եթե միայն վերջնի արժեքը հիսուն ռուբլուց ավել չէ, խնամակալը կամ հոգաբարձուն կարող է վաճառել, առանց գյուղխորհրդի թույլտվության։

Գյուղական խորհուրդները պետք է հսկեն, վոր խնամարկյալին պատկանող դրամական գումարները, արժեթղթերը և այլ արժեքները, բացառությամբ այն գումարների, վորոնք անհրաժեշտ են նրանց ապրուստը հոգալու և նրանց գույքը կառավարելու համար, պահվում են պետական հաստատություններում, այն է՝ վարկային ընկերություններում, խնայողական դրամարկղներում, Պետական բանկի բաժանմունքներում և այլն։

Այն դեպքերում, երբ խնամարկյալը չունի վոչ մի գույք, վոչ մի ապրուստի միջոց, ասենք, մերկ վորբ է, դատարկ խրճիթում նստած, գյուղական խորհուրդը պարտավոր է միջնորդություն հարուցել սոցիալական ապահովագրական մարմինների առաջ խնամակալին միջոցներ տրամադրելու, վորպեսզի վերջինս հոգա խնամարկյալի կարիքները։ Նման դեպքերում մեծ ոգնություն կարող են հասցնել խնամարկյալներին ՓՈԿ-երը, վորոնց և առաջին հերթին պետք է դիմեն գյուղական խորհուրդները։

Հայկական ԽՍՀ
Ս. Ստամբիկյանի
անվան
Публичная Библиот

Խնամակալների և հոգաբարձուների կողմից կատարված դրամական ծախքերի ստուգման աշխատանքներին գյուղխորհուրդը կարող է մասնակից դարձնել գյուղխորհրդի վերստուգիչ հանձնաժողովը, վորը վերստուգման արդյունքները ներկայացնում է գյուղխորհրդին տեղեկանալու համար։

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՊԵՏՔ Է ՀՍԿԻ, ՎՈՐ ԽՆԱՄԱԿԱԼՆԵՐԸ ՅԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐՆ ԱՆՓՈՒՅԹ ՉԼԻՆԵՆ ԴԵՊԻ ԻՐԵՆՑ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ Ի ՉԱՐ ԳՈՐԾ ՉԴՆԵՆ ԻՐԵՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Յուրաքանչյուր գյուղացի, շահագրգռված անձ, գյուղտասարակական ներկայացուցիչ կարող է մտնել գյուղական խորհրդի գրասենյակը, ներկայանալ գյուղխորհրդի նախագահին և հայտնել նրան, վոր խնամակալը լավ չի հսկում խնամարկյալի գույքի վրա, վոր նա ի չարն է գործ դնում իր իրավունքները և այլն։ Նման բողոքներ ստանալուց՝ գյուղական խորհուրդը պարտավոր է քննություն կատարել. յեթե հաստատվեց, վոր իրոք խնամակալն, ոգտվելով իր դրությունից, վատնահարել է խնամարկյալի շահերը, անմիջապես հեռացնում են նրան իր պարտականություններից, իսկ անհրաժեշտ դեպքում յենթարկում դատական պատասխանատվության։

Այն գյուղական խորհուրդը, վոր չի լսի մասսայի ձայնը, անուշադրության կը մատնի նման դիմումներն ու մատների արանքով կը նայի խնամակալների չարագործությունների և անփութության վրա կը յենթարկվի պարտականքի ու որինական պատասխանատվության։

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՊԵՏՔ Է ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՊԱՀԱՆՋԻ ԽՆԱՄԱԿԱԼՆԵՐԻՑ ՅԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻՑ

Ի՞նչ դրության մեջ է խնամարկյալի գույքը, ի՞նչպես է ոգտագործվում այդ, ի՞նչպես են ընթանում խնամարկյալի կրթության ու դաստիարակության գործը — այս բոլորը գյուղական խորհուրդը, նրա նախագահը, անդամները կարող են պարզել նախ՝ անձնական հետաքրքրությունների միջոցով և ապա՝ պահանջելով խնամակալներից ու հոգաբարձուներից հաշվետվություն թե գրավոր և թե բանավոր։ Որենքը պահանջում է, վոր խնամակալները և հոգաբարձուները տարեկան մեկ անգամ ներկայացնեն գյուղխորհրդին գրավոր հաշվետվություն, վորի մեջ պետք է ցույց տան, թե ի՞նչպես է կառավարել գույքը, ի՞նչ յեկամուտներ են ստացել, ի՞նչ ծախքեր են կատարվել, ի՞նչպես է իրագործվել հոգատարությունը խնամարկյալի վերաբերմամբ, ի՞նչպես է ընթացել անչափահասի դաստիարակությունը, կրթությունը, հոգեկան հիվանդի բժշկությունը և այլն։ Յեթե հաշվետվությունը լրիվ է և կասկածանքների տեղիք չի տալիս,

գյուղական խորհուրդն այդպիսին հաստատում է։ Բացի գրավոր զեկուցումից՝ գյուղական խորհուրդներն իրենց նիստերում պարբերաբար պետք է դնեն խնամակալների ու հոգաբարձուների բանավոր զեկուցումները և նկատված բացերի, թերությունների մասին տան իրենց ցուցումները։ Այս ասպարիզում մեր գյուղական խորհուրդները շատ քիչ բան են արել, որի վրա պետք է անհրաժեշտ ուշադրություն դարձնել։

ԻՆՉՊԵՍ ԵՆ ՔՆՆՈՒՄ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԸ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

Ինչպես սկզբում ասվեց, յուրաքանչյուր գյուղացի, հասարակական կազմակերպություն, պետական հիմնարկ, յեթե զրկված են խնամակալի կամ հոգաբարձուի գործունեությունից, կամ գտնում են անհրաժեշտ, որ մեկի վրա խնամակալություն նշանակվի, դիմում են գյուղական խորհրդին և խնդրում համապատասխան միջոցներ ձեռք առնելու։

Ի՞նչպես է քննում խնամակալության և հոգաբարձության գործերը գյուղական խորհուրդը։ Նա գումարում է նիստ, որտեղ հրավիրվում են դիմում ավողները, բողոքողները, խնամակալը կամ հոգաբարձուն, վկաները և այլ շահագրգռված անձինք, անհրաժեշտության դեպ-

քում նաև խնամարկյալը կամ խնամակալության և հոգաբարձության յենթակա անձինք։

Գյուղխորհրդի նախագահը, բանալով նիստը, զեկուցում է գործի հանգամանքների մասին, և ապա հերթով հարցաքննվում են բոլոր ներկա յեղողները գործը պարզելու համար։ Քննությունից հետո գյուղխորհուրդը կայացնում է համապատասխան վորոշում, վորից գժգոհ լինելու դեպքում՝ կողմերը կարող են դիմել գավառակալին գործկոմին, վորի վորոշումը համարվում է վերջնական։

Նույն այս ձևով գյուղական խորհուրդը քննում և վորոշում է կայացնում խնամակալներ, հոգաբարձուներ նշանակելու, գույքը գրավ դնելու, ծախելու, անչափահասի դաստիարակման հետ կապված հարցերի մասին։ Յուրաքանչյուր վորոշում պետք է արձանագրվի և մտցվի գյուղխորհրդի նիստերի արձանագրությունների մատյանի մեջ։

ՈՎ Է ՀՍԿՈՒՄ ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

Գյուղական խորհուրդների գործունեության վրա խնամակալության և հոգաբարձության աշխատանքների ասպարիզում հսկում են գավառակալին գործադիր կոմիտեները, թեև վերջիններս չեն խառնվում գյուղական խոր-

հուրդների գործերին խնամակալ նշանակելու կամ արձակելու դեպքում։ Գավառակային գործադիր կոմիտեները շահագրգռված են, որ խնամակալության գործը գյուղերում դրվի լավ հիմքերի վրա, իսկ այդ նպատակին հասնելու համար, անհրաժեշտ է գործկոմների նիստերում պարբերաբար լսել գյուղխորհուրդների զեկուցումները խնամակալության և հոգաբարձության աշխատանքների մասին, հետաքրքրվել գյուղխորհուրդների ընթացիկ աշխատանքներով այդ ասպարիզում։

ՅԵՐԲ Է ԴԱԴԱՐՈՒՄ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ Է ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆ ԱՅԴ ՀԱՆԳԱՄԱՆՔԸ

Մարդիկ կան, որոնց վրա նշանակված խնամակալությունը կամ հոգաբարձությունը կարող է մինչև նրանց կյանքի վերջը շարունակվել, ինչպես օրինակ՝ կույրերի, համրերի, անբուժելի հոգեկան հիվանդների վերաբերմամբ։ Սակայն ընդհանրապես խնամակալությունն և հոգաբարձությունը մշտական չէ և նա կարող է դադարել հետևյալ դեպքերում.—անչափահասների նկատմամբ, յերբ նրանք դառնում են չափահաս, հոգեկան հիվանդների նկատմամբ, յերբ սահմանված կարգով քննվելուց հետո՝ նրանք առողջացած են համարվում, շռայլողների նկատմամբ, յերբ օրինական ուժ կստանա դատարանի՝ նրանց գործունակ ճանաչելու վերաբերյալ վորոշումը, գուլքի նկատմամբ, յերբ անհայտ բացակայողը կներկայանա կամ յերբ ժառանգությունը կընդունվի, խնամարկյալի մահվան դեպքում։

Խնամակալությունն և հոգաբարձությունը դադարելու մասին գյուղական խորհուրդը արձանագրում է իր նիստում միաժամանակ գրելով այդ առթիվ «խնամակալների և հոգաբարձուների ցուցակի» 5-րդ ապյուսակում, (տես ձևը գրքույկի վերջում)։

Գյուղական խորհուրդները խնամակալության և հոգաբարձության վերաբերյալ հատուկ գործ պետք է ունենան։

Գյուղական խորհուրդներում կատարած հետազոտությունը ցույց է տալիս, որ մեր գյուղական խորհուրդները խնամակալության և հոգաբարձության հատուկ գործեր չունեն, որի հետևանքով հաճախ կարևոր փաստաթղթերը մատնվում են կորուստի և փչացման։ Այս դրությանը վերջ տալու նպատակով, անհրաժեշտ է, որ գյուղական խորհուրդներն իրենց գրասենյակում ունենան խնամակալության և հոգաբարձության վերաբերյալ հատուկ գործեր, որոնց մեջ պետք է պահվեն խնամակալության և հոգաբարձուների ցուցակը (տես գրքույկի վերջում կցված ձևը), խնամարկյալների գույքերի ցուցակները, գյուղական խորհուրդների, ժողովրդական դատարանների, առբաժինների վորոշումներն ու

կարգադրությունները՝ խնամակալության և հոգաբարձության վերաբերյալ և այլ փաստաթղթեր։

ՊԵՏՔ Է ՄԱՍՍԱՅԱԿԱՆԱՑՆԵԼ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՈՐԵՆՔԸ

Մինչև այժմ խնամակալության և հոգաբարձության որենքի ժողովրդականացման ուղղությամբ շատ քիչ բան է արված։ Անհրաժեշտ է, որ գյուղական խորհուրդները մանրամասն ուսումնասիրեն «Ամուսնության, ընտանիքի և խնամակալության» Որենսգիրքը, այս գրքույկը և ընդհանրապես այն որենսդրությունը, որ վերաբերում է խնամակալության։ Միաժամանակ կարևոր է, որ գավառակալին աշխատակիցներն այս հարցի շուրջը զեկուցումներ կազմակերպեն հասարակական ժողովներում, հասարակական կազմակերպություններում, կանանց համար և այլն։ Նման յեղանակով հնարավոր կը լինի մոտիկ ապագայում խնամակալության և հոգաբարձության գործը գնել իր կոչման բարձրության վրա։

Հայաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեի Կազմբաժնի Վարիչ՝ Տեղակալ՝
Խ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Յերևան

ՀԱՅԿՈՒՅՍ Ա. ՍՅԱՄԱՆԻՑՅԱՆԻ Անվան Публичная Библиотека

Ուսումնական

ՅՈՒՅԱԿ

Հանդերձի գավառի, Դավթի գավառի Մարտունի գյուղի վարչական խորհրդի և հոգաբարձության վերաբերյալ 1928 թ.

№ № գրամատեղի	Խնամակալի կամ հոգաբարձուի անունը, ազգանունը, հայրանունը	Ո՞ւմ հետ ամուսնացած և նշանակված խնամակալ կամ հոգաբարձու	Յե՞րբ և նշանակված	Ո՞ւմ վերջին մասը (թեմը, գավառը, գյուղը)	Յե՞րբ և գրանցված վերջին անգամ քյուրեղից կամ հոգաբարձուից	Նշանակումներ խնամակալների փոփոխության յենթարկելու դեպքում (ազգանուն, հայրանուն)
1	2	3	4	5	6	7
1	Վարդանյան Սամսոն Սահակի	Վերը Գրիգոր Անդրեասի Մարտիրոսյան	1928 թ. 5 հունվարի	Գյուղխորհրդի հրամի	—	—

ՀՀ Ազգային գրադարան
NL0212208

39.685

ԳԻՆԸ 15 ԿՈՊ.